Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 26

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21-Ի ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին՝ Ն. Անդրեասյանը, Տ. Գալստյանը, Ա. Զաքարյանը, Վ. Մկրտչյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Խաչատրյանը, Ս. Շուխյանը, Ն. Պետրոսյանը, Ա. Սարգսյանը, Բ. Վարդանյանը, Ս. Օվոյանը:

Նիստին մասնակցում էին նաև՝ համայնքի ղեկավարի տեղակալներ Վ. Սաֆարյանը, Գ. Եղիազարյանը, աշխատակազմի բաժինների պետեր Ա. Մնացականյանը, Շ. Վահանյանը:

1. Ծավալված քննարկման արդյունքում հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով 2019 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրերին մասնակցելու համաձայնություն տալու մասին:

/ Զեկուցող՝ Գ. Եղիազարյան/

3. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

4. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

5. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

6. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված բնակավայրերի նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

7. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

8. Աշտարակ քաղաքի Նարեկացու փողոցում և Ն. Աշտարակեցու հրապարակում ծառահատում կատարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

9. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

/1/ Օրակարգը հաստատվել է 11 - ԿՈՂՄ ձայներ ստանալով:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - *Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով 2019 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրերին մասնակցելու համաձայնություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավարի տեղակալ Գևորգ Եղիազարյանը և առաջարկեց համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաներ ստանալու նպատակով Աշտարակ համայնքի կողմից ներկայացված ծրագրերին:

Ծավալված քննարկման ժամանակ ելույթներով հանդես եկան և զեկուցողին հարցեր ուղղեցին Տ. Գալստյանը, Ս. Օվոյանը, Կ. Շահազիզյանը, Վ. Մկրտչյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Գ. Եղիազարյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը, որոնց իրադրության հատակագիծը կցված է նախագծին, օտարել աճուրդ-վաճառքով, միաժամանակ սահմանել նաև մեկնարկային գին:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Կ. Շահազիզյանը, Տ. Գալստյանը, Ա. Սարգսյանը, Ս. Օվոյանը:

Բարձրացված հարցերին սպառիչ պատասխաններ տրվեցին Ա. Մնացականյանի կողմից:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Յ Ի Ն - 4 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր, որոնց իրադրության հատակագծերը կցված են որոշման նախագծին, տրամադրել կառուցապատման իրավունքով: Միաժամանակ, զեկուցողն առաջարկեց հաստատել տարեկան վճարի մեկնարկային գին:

Ծավալված քննարկման ընթացքում զեկուցողին հարցեր ուղղեց Տ. Գալստյանը, որոնց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Ա. Մնացականյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Յ Ի Ն - 5 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Հաջորդ հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր, որոնց իրադրության հատակագծերը կցված են որոշման նախագծին, աճուրդ-վաճառքի միջոցով օտարել, միաժամանակ սահմանել մեկնարկային գին:

Ծավալված քննարկման ընթացքում զեկուցողին հարցեր ուղղեցին և ելույթով հանդես եկան Տ. Գալստյանը, Ս. Օվոյանը, Ա. Խաչատրյանը, որոնց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Ա. Մնացականյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

8 – ԿՈՂՄ, 1 – ԴԵՄ, 1 – ՁԵՌՆՊԱՀ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Խաչատրյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Յ Ի Ն - 6 - *Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված բնակավայրերի նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց համայնքի վարչական տարածքում գտնվող 129քմ մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասը ճանաչել համայնքային սեփականություն և հավանություն տալ այն աճուրդ-վաճառքով օտարելուն:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Ս. Օվոյանը, Տ. Գալստյանը, Կ. Շահազիզյանը, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Տ. Գալստյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 7 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր, որոնց իրադրության հատակագծերը կցված են նախագծին, կառուցապատման իրավունքով քաղաքացիներին տրամադրելու վերաբերյալ:

Զեկուցողին հարցեր ուղղեց Ս. Օվոյանը, որոնց Ա. Մնացականյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Տ. Գալստյանը և Ն. Անդրեասյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 8 - *Աշտարակ քաղաքի Նարեկացու փողոցում և Ն. Աշտարակեցու հրապարակում ծառահատում կատարելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց թույլտվություն տալ Նարեկացու փողոցում և Ն. Աշտարակեցու հրապարակում ծառահատում կատարելուն:

Նախագծի շուրջ հարցեր ուղղեցին և ելույթներով հանդես եկան Ա. Սարգսյանը, Ս. Օվոյանը, Կ. Շահազիզյանը:

Բարձրացված հարցերին սպառիչ պատասխաններ տրվեցին համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Ա. Մնացականյանի կողմից:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 9 - *Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց գույքահարկի և հողի հարկի գծով հարկային արտոնություն տրամադրել Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի: Միաժամանակ նշեց, որ արտոնությունները տրամադրվում են տույժերի մասով՝ մայր գումարները վճարելուց հետո:

Զեկուցողին հարցեր ուղղեցին և ելույթներով հանդես եկան Ա. Սարգսյանը. Կ. Շահազիզյանը Տ. Գալստյանը, Վ. Մկրտչյանը: Շ. Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2019 թվականի մարտի 21-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	**ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ**
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	**ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ**
ԱԶԱՏ ՁԱՔԱՐՅԱՆ	**ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ**
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ	**ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	**ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ**
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ